ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Մ. ՄԱՆՐԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մանրիկյան.

Ի պատասխան Ձեր 23.01.2019թ. հ.01/38Մ գրության՝ տեղեկացվում է.

ՀՀ կառավարության 05.10.2001թ. N950 և 14.07.2002թ. N1169-Ն որոշումներով սահմանվել է Երևանի Հյուսիսային պողոտայի օտարման գոտում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը գնելու, վերցնելու գնային առաջարկի ձևավորման և իրացման կարգը, որոնցով ղեկավարվելով իրականացվել է Հյուսիսային պողոտայի տարածքում առկա անշարժ գույքերի օտարման գործընթացը: Հիշյալ տարածքում գտնվող անշարժ գույքերի գնահատման աշխատանքներն իրականացվել են լիցենզավորված անկախ գնահատող կազմակերպությունների կողմից:

Ինչ վերաբերում է նախկինում կնքված անշարժ գույքի օտարման պայմանագրերով տրված փոխհատուցումների անհամարժեքության հետ կապված անշարժ գույքի գնային վերահաշվարկ կատարելու հարցին, ապա այն Երևան համայնքին, նրա տեղական ինքնակառավարման մարմիններին (Երևանի ավագանի, Երևանի քաղաքապետ), ինչպես նաև Երևանի քաղաքապետարանին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորություններից դուրս է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ